ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԴԻԶԱՅՆՈՒՄ» ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

ՆԵԼԼԻ ԷԼՉՅԱՆ
ՀԳՊԱ դասախոս

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոգեբանությունն իբրև ինքնուրույն գիտաճյուղ ձևավորման ու կայացման ակունքներում արդեն իսկ սերտորեն փոխկապակցված է եղել արվեստի բնագավառին՝ իր բովանդակային կառուցվածքում պահպանելով ստեղծագործականի տարրը՝ իբրև իրականության ընկալման յուրատիպ համակարգ: «Դիզայնի հոգեբանությունը», հանդիսանալով այդ համակարգի արդիական մասնիկ, թույլ է տալիս իրացնել նախագծային մտածողությանը, ստեղծագործական աշխարհընկալմանն ու հոգեբանականացված վերաբարկմանը բնորոշ մտածական ու կիրառական մոտեցումները մեկ բնագավառում: Հանդիսանալով նոր ձևավորվող և զարգացող ոլորտ՝ դիզայնի հոգեբանության տեսական և կիրառական ասպեկտների համալիրը հետազոտողից պահանջում է ուսումնասիրության և դասավանդման համար անհրաժեշտ հստակ մեթոդաբանական համակարգի կառուցում: Ըստ այդմ՝ հոդվածում ներկայացված են ինչպես դիզայնի հոգեբանության մեթոդաբանական կառույցին առնչվող արդիական հիմնախնդիրներ, այնպես էլ համընդհանուր մանկավարժության հոգեբանությանը վերաբերող մի շարք դրույթներ:

Առանցքային բառեր. *Հոգեբանությունը դիզայնում, արվեստի հոգեբանություն, ստեղծագործական աշխարհընկալում, հոգեբանականացված մտածողություն, դասավանդման մեթոդաբանություն, ներանձնային պոտենցիալ, մանկավարժական հոգեբանություն:*

Դեռևս բանական մտքի ձևավորման ակունքներում մարդկային մտածողությանը հատուկ է եղել «հոգու» մասին իմացության

ճանաչողական գիտելիքի հայթհայթումը: Հին Հունաստանում Արիստոտելի «Հոգու մասին» աշխատության մեջ կարելի է հանդիպել հոգեբանության առարկայի հետազոտության վերաբերյալ ընդարձակ մեկնաբանություն: Ի սկզբանե հոգեբանությանը (թարգ. հին հունարենից ψυχή «հոգի», λόγος «գիտելիք»), որպես հոգու մասին գիտելիքի, վերագրվել է խորհրդապաշտական իմաստ, և այն առավելապես զուգորդվել է անդրանցային իրողությունների դաշտի հետ: Միջնադարյան ժամանակաշրջանում «հոգու հետազոտողներին» բնորոշում էին իբրև մոգերի և գերբնական հատկություններով օժտված մարդկանց:

Առհասարակ, հոգեբանության ընկալումը՝ իր կրոնամիստիկական բաղադրիչի հետ համատեղ, պահպանվել է առ այսօր: Եվ այդ բաղադրիչը իր ուրույն տեղն է զբաղեցնում հոգեբանական գիտելիքի ընկալման հարցում: Պատճառն այն է, որ մարդու մտածողությունն ի սկզբանե մտապատկերային է եղել: Եվ հենց այդ հիմքի վրա է, որ ժամանակակից մարդը ընդունակ է վերացարկման:

Մտապատկերային մտածողության լավագույն նմուշը դիցաբանական մտածողությունն էր, որից էլ ծագեց հոգեբանականացված մտապատկերային մտածողությունը՝ որպես մարդու և աշխարհի ճանաչողության գործիք:

Հատկանշական է, որ «Հոգեբանություն» առարկայի անվանումը կապված է դիցաբանական հերոսուհի՝ Փսիխեայի անվան հետ:

Գեղեցկության ու սիրո աստվածուհի Աֆրոդիտեի որդի Էրոսը սիրահարվում է մի գեղեցիկ երիտասարդ կնոջ՝ Փսիխեա անունով: Սակայն մայրը դժգոհ էր, որ որդին հասարակ մահկանացուի հետ է ցանկանում կապել իր ճակատագիրը և շարունակ փորձությունների էր ենթարկում Փսիխեային: Սակայն կնոջ սերն այնքան մեծ էր, որ նրան հաջողվեց դիմակայել բոլոր դժվարություններին: Այդպիսով, նա նվաճեց աստվածների համակրանքը և Զևսը նրան աստվածների շարքին դասեց: Անմահություն ձեռք բերած մահկա-

նացու Փսիխեան հավերժ կատարելություն փնտրող հոգու խորհրդանիշ դարձավ[1]:

Հոգեբանության առարկայի ընկալումը զգալիորեն փոխվում է նորագույն ժամանակներում: Հոգեբանության՝ որպես մարդկային հոգեկանի կառուցվածքն ուսումնասիրող ինքնուրույն և ամբողջական հայեցակարգի մասին տեսության առաջին անգամ հանդիպում ենք հոգեվերլուծության փիլիսոփայության շրջանակներում՝ շնորհիվ Զիգմունդ Ֆրոյդի: Դա հիրավի գիտական հեղաշրջում էր հոգեբանական մտքի կայացման և հոգեբանականացված աշխարհընկալման ձևավորման հարցում: Ֆրոյդն առաջինն էր, որ մատնանշեց գիտակցական դաշտի անմիջական ընկալումից դուրս գտնվող անգիտակցականը, որում առկա բոլոր հույզերը, ցանկությունները, վախերը, արտամղված բոլոր ապրումները, համամարդկային ողջ փորձը քողարկված կերպով ուղղորդում են մարդու գիտակցական գործունեությունը: Թեև Ֆրոյդին նախորդող մի շարք հետազոտողներ, մասնավորապես՝ Վիլհելմ Վունդտը, արդեն իսկ դիտարկում էին մարդու հոգեկանը որպես գիտական հետազոտության ենթակա իրողություն, սակայն Ֆրոյդն առաջինն էր, որ տվեց հստակ համակարգված մեթոդաբանական կառուցվածք մարդու հոգեկանի ուսումնասիրության համար:

Հոգեբանականացված մտածողության հաջորդ կարևոր փուլը մեկնարկեցին նեոֆրոյդիստական, իսկ հետագայում՝ հումանիստական դպրոցների հետևորդները, ի դեմս Էրիխ Ֆրոմի, Աբրահամ Մասլոուի, Վիկտոր Ֆրանկլի և այլոց: Եվ այստեղ է, որ հոգեբանությունն առաջին անգամ մարդու ներաշխարհային գործընթացները մեկնաբանում է որակապես նոր դիտանկյունից: Այժմ մարդը ոչ թե իր բնազդային կենսաբանական բնության գերին է, այլ սեփական գոյության և լինելության խնդիրը արժեքաբանական

[1] **З. Фрейд, К. Абрахам, О. Ранк, Г. Закс, К. Г. Юнг**, *Между Эдипом и Озирисом : Становление психоаналитической концепции мифа*, Москва 1998, էջ 127.

հիմքի վրա իմաստավորողը: Այսուհետ մարդկային գոյության հիմնախնդիրը փոխկապակցված է նրա ինքնարդիականացող, ազատ, ինքնաբավ և ստեղծագործող էության հետ: Մարդը, որպես իմաստ որոնող, ստեղծագործական հիմքի վրա արժեքներ կերտող և ազատ արարող էակ. սա էր պոստմոդեռնի ժամանակի իդեալը:

Իրականության այս տեսլականի համատեքստը խթանեց ստեղծագործականության փիլիսոփայության ձևավորումը, որն էլ հետագայում հիմք հանդիսացավ գեղարվեստի հոգեբանության՝ որպես առանձին և ինքնուրույն գիտաճյուղի կայացմանը: Հենց գեղարվեստի հոգեբանությունից առանձնացան այնպիսի ժամանակակից գիտակարգեր, ինչպիսիք են կերպարվեստի, գեղանկարի, դիզայնի, ինչպես նաև երաժշտության հոգեբանությունը, և մի շարք այլ գիտաճյուղեր[2]: Տվյալ հոդվածի ուսումնասիրության նյութն է դիզայնի հոգեբանությունը, որը թեև ձևավորվել է արվեստի հոգեբանության շրջանակներում և դրանից փոխառել է մի շարք ընդհանրական մոտեցումներ, սակայն պարունակում է նաև իրեն բնորոշ յուրատիպ մատուցում պահանջող որոշակի դրույթներ: Պետք է նշել, որ դիզայնն ու հոգեբանությունը իրականության անմիջական ընկալման տեսանկյունից շատ մոտ են իրար: Դրանց երկուսի հիմնական խնդիրը մարդու հոգեհուզական և ստեղծագործական ոլորտ ներգործելն է անմիջական ընկալման ճանապարհով, պարզապես ներազդման գործիքներն են տարբեր: Եթե հոգեբանությունը փոխում է մարդուն՝ նրա հոգեկանի վերլուծության միջոցով, ապա դիզայնը փոխում է մարդուն՝ նրան անմիջականորեն թելադրելով իրականության հետ գործնականորեն փոխազդելու որակապես նոր չափորոշիչ, որն արդեն իսկ սահմանել է դիզայները իր նախագծի միջոցով:

Ստեղծագործական աշխարհընկալման վրա հիմնված մտածական այս մոդելն, իհարկե, պահանջում է ճանաչողական և

---

[2] **Ц.П.Короленко, Н.В.Дмитриева**, *Homo postmodernus: Психологические и психические нарушения в посмодернистском мире*, Новосибирск, 2009. էջ 53.

մեթոդաբանական ապարատի հստակ կառուցարկված նախագիծ: Հետազոտողների առջև խնդիր է կանգնում՝ ստեղծել այնպիսի մեթոդաբանական համակարգ, որը կլուծի հոգեբանության, և, մասնավորապես, դիզայնի հոգեբանության առարկայի բովանդակության լիարժեք վերծանման խնդիրը, և, դրա հետ մեկտեղ, թույլ կտա դասավանդման գործընթացում կիրառել այնպիսի մոտեցումներ, որոնք կբերեն ուսուցանողի զարգացմանը՝ իբրև ստեղծագործող, ներդաշնակ, հոգեբանորեն գրագետ անձ: Քանզի հենց դա է հոգեբանության հիմնական նպատակը: Անկախ այն բանից, խոսքը վերաբերվում է դասավանդման գործընթացին, թե հոգեբանության ոլորտի տեսական կամ կիրառական կամայական այլ դաշտի ուսումնասիրությանը, ի վերջո, հոգեբանության գերխնդիրը մնում է անհատի անձնային աճն ու ներքին կայացումը, ուսանողի անհատական ստեղծագործական պոտենցիալի բացահայտումը: Չէ որ, ըստ էության, կրթել՝ նշանակում է բացահայտել և զարգացնել ուսանողի պոտենցիալը[3]:

Եվ, այսպիսով, մեթոդաբանական համակարգն, անշուշտ, պետք է ներառի առարկայի մատուցման տեսական և կիրառական հիմքերի այնպիսի գործիքակազմ, որի միջոցով հնարավոր կդառնա ամեն ուսանողին հատուկ և չկրկնվող ընկալման, յուրացման և մտածողության առանձնահատկությունների բացահայտումը և զարգացումը:

Իհարկե, դասավանդման լսարանային ձևաչափը ենթադրում է մեթոդաբանական տեսանկյունից որոշակի ընդհանրացված մոտեցում ևս, որը հիմնված է մանկավարժության, բարոյագիտության և հոգեբանության առարկաներին հատուկ մի շարք արտաժամանակային արժեքների վրա: Սակայն, ցանկացած առանձին ժամանակահատված, ցանկացած առանձին լսարան իր հերթին մանկավարժին թելադրում է որոշակի, միայն իրեն բնորոշ

[3] **Р. Штайнер**, *Духовнонаучные основы педагогики*, Москва, էջ 178.

չափորոշիչ: Եվ այստեղ է, որ մանկավարժից և հետազոտողից պահանջվում է որոշակի հոգեբանական ճկունություն՝ լսարանի նկատմամբ ընկալունակ լինելու և մեթոդաբանական համակարգը մշտապես նորացնելու համար: Սա առավել արդիական է, երբ խոսքը վերաբերում է դիզայնի հոգեբանությանը: Իրերը ծնվում են մարդու մտքում, սակայն այդ իրերն ինքնին իրականության և մտածողության նոր ձևաչափ են ստեղծում: Եվ հոգեբանության ու այլ հարակից առարկաների մեթոդաբանության խնդիրն է մշտապես փոփոխվելով՝ հարմարվել մտածողության այդ նորացվող ձևաչափին:

Այսպիսով, ցանկացած առարկայի դասավանդման պարագայում մեթոդաբանական համակարգը կարելի է լիարժեք համարել միայն այն պարագայում, եթե այն հնարավորինս հարմարեցվածն է այն գիտամանկավարժական համատեքստին, որի համար նախատեսված է: Այս սկզբունքին հետևողական լինելը հատկապես կարևոր է, երբ խոսքը վերաբերում է հոգեբանության առարկային: Հոգեբանությունը, որի ուսումնասիրության առանցքում գտնվում է մարդու հոգեկանը, իբրև հետազոտության դաշտ երբեք չի եղել ստատիկ բնույթի: Հոգեբանության առարկայի բովանդակային ոլորտի հետազոտման գործընթացը հնարավոր է իրականացնել միայն մարդու հոգեկանի դինամիկ զարգացման կտրվածքում, քանի որ՝ թե՛ առանձին անհատի, թե՛ հասարակության հոգեբանությունը մշտապես փոփոխվում է ներքին և արտաքին գործոնների մշտական ներազդման արդյունքում: Այդ իմաստով, ամեն առանձին սերունդ հուշում է մեթոդաբանական իր անհատականացված ծրագրի բովանդակությունը:

Դիզայնի հոգեբանության բովանդակային միջուկի վերհանումը ինքնին ենթադրում է հոգեբանական հիմնական գործընթացների, ճանաչողության, ընկալման և գիտելիքի յուրացման առանձնահատկությունների մեկնաբանում և աշխարհընկալման որակապես նոր՝ հոգեբանականացված մտածողության հայեցակարգի ձևավորում: Այլ կերպ ասած՝ սովորել հոգեբանություն

նշանակում է սովորել տեսնել աշխարհը հոգեբանական գիտելիքի պրիզմայի միջով: Այս գաղափարը բխում է հոգեբանության դասավանդման մեթոդաբանության կարևորագույն սկզբունքից՝ ուսանողի մոտ ձևավորել հոգեբանականացված մտածողություն և աշխարհայացք: Եվ այդ աշխարհայացքն այս դեպքում ենթադրում է որոշակի համապատասխան արժեհամակարգի ձևավորում, քանի որ իրականության արժեքային ընկալումն է, որ ստիպում է կյանքը ծառայեցնել արժեքային իդեալներին, անկախ այն բանից՝ խոսքը գնում է մասնագիտական դաշտի, թե կենսագործունեության ցանկացած այլ բնագավառի մասին:

Այս իմաստով հոգեբանության մեթոդաբանության այս եզրը զուգորդվում է մանկավարժության ընդհանուր մեթոդաբանության հիմնական բաղադրիչներից մեկին՝ մեթոդաբանության լուսավորչական-դաստիարակչական սկզբունքին: Ըստ էության, հոգեբանականացված մտածողությունը հիմնված է երկու՝ բարոյագիտական և տրամաբանական-մտածական բաղադրիչների վրա: Եվ եթե բարոյագիտական բաղադրիչը լուծում է ուսանողի իմաստարժեքային դաշտի ձևավորման խնդիրը, ապա երկրորդ բաղադրիչը նպաստում է վերջինիս մոտ նպատակադրված հիմնախնդիրային մտածողության կայացմանը: Սովորեցնել մտածել հիմնախնդիրներով, սահմանել հստակ մասնագիտական նպատակներ, գիտակցել, թե ինչ արդիական խնդիր է լուծում կամայական մասնագիտական նախագիծը՝ սա՛ է տրամաբանական մտակառույցի վրա հիմնված մեթոդաբանական համակարգի գերնպատակը[4]:

Այս պարագայում դիզայնի հոգեբանության մեթոդաբանության կիրառական մասը ենթադրում է վերլուծական մետահամակարգերի կառուցարկում և լսարանի հետ այլընտրանքային մետամոդելների մշակում: Անալիտիկ մետահամակարգերի կառուցարկման գործընթացը խթանում է ուսանողի ոչ միայն տրամաբանական,

[4] **Р. Штайнер,** *Антропология и педагогика*, Москва, 1991, էջ 201.

այլև վերացական մտածողությունը, ինչը դիզայների մտքի զարգացման առումով առավել քան նպաստավոր է: Հենց վերացարկման գործընթացն է թույլ տալիս համադրել ռացիոնալ և ստեղծագործական ընկալումները մեկ մտակառույցում:

Դիզայնի հոգեբանության առարկայի մեթոդաբանությունը հիմնվում է երեք հիմնական՝ տրամաբանական, բուն հոգեբանական և գեղագիտական-բարոյագիտական ոլորտների հիմնական սկզբունքների կիրառման վրա: Եվ երբ խոսքը վերաբերում է տրամաբանության համընդհանուր հայեցակետի վրա հիմնված մեթոդաբանական համակարգին, ապա դասավանդողի առջև խնդիր է կանգնում ուսանողի մոտ ձևավորել սեփական ինքնուրույն մտածողություն, տրամաբանական հստակ մտակառույցների և դատողությունների վրա հիմնված մտածելաոճ, փաստարկված եզրակացությունների հանգելու կարողություն և մասնագիտական անհատին դիմել նպատակադրվող գործունեության և սեփական ճիշտ որոշումներ կայացնելու ընդունակություն[5]:

Հոգեբանության մեթոդաբանության կարևորագույն խնդիրներից մեկն է՝ օգնել ուսանողին ձևավորել մասնագիտական հետաքրքրությունների իր սեփական շրջանակը, ճիշտ կողմնորոշվել որպես մասնագետ և կարողանալ տարբերակել սեփական մասնագիտության այն բնագավառները, որոնք առավելագույնս համապատասխանում են նրա բնավորությանը և լավագույնս արտացոլում են այն սպասելիքները, որ նա ունի իր մասնագիտության հետ կապված:

Այս իմաստով, իհարկե, չի կարելի շրջանցել այն հանգամանքը, որ մանկավարժական հոգեբանությունն, առաջին հերթին, ուղղված է ուսանողի մոտ ձևավորելու ինքնաճանաչման և անձնային ռեֆլեքսիային դիմելու մշտական ձգտում: Սեփական հույզերը, ապրումները, իր գործողությունների իրական դրդապատճառները հասկանալուց հետո միայն ուսանողին կհաջողվի կայանալ

[5] **Л. Выготский**, *Психология искусства*, Москва, 2021, էջ 34.

անձնապես և մասնագիտորեն՝ ձևավորվելով որպես ինքնուրույն դատող և մտածող անհատականություն:

Ինքնաճանաչմանն ուղղված մեթոդաբանական գործառույթների զգալի մասը նպատակահարմար է իրացնել հոգեբանական պրոյեկցիայի մեթոդի վրա հիմնված առաջադրանքների միջոցով, որոնց շնորհիվ հնարավոր է դառնում սեփական հոգեբանական գործընթացները ճանաչել և տարբերակել արտաքին իրականության մեջ և, այդ իրականությունից ստացած հետադարձ կապի միջոցով, սովորել վերլուծել դրանք: Հոգեբանական պրոյեկտիվ մեթոդն արդյունավետ է ցանկացած մասնագիտության պարագայում, սակայն, երբ խոսքը վերաբերում է դիզայնին, ապա դրա կիրառումն է՛լ ավելի արդիական է դառնում: Դիզայների նախագիծն ինքնին հանդիսանում է իր սեփական ներանձնային պոտենցիալի, մտավոր կարողությունների և հոգեբանական ներուժի պրոյեկցիան արտաքին իրականության մեջ: Դիզայների նախագծած իրի մեջ առարկայանում է նրա սեփական հոգեբանությունն ու աշխարհայացքը: Եվ ինքնաճանաչմանն ու անձնային աճի զարգացմանն ուղղված միջացառումներն այս պարագայում մեթոդաբանության տեսանկյունից չափազանց կարևոր են:

Անհատական պոտենցիալի բացահայտմանն ու ինքնաճանաչմանն ուղղված այլ առաջադրանքներից են սցենարային մտածողությունը զարգացնող իրավիճակների ձևայնացումները և վարքային հոգեբանությանն առնչվող որոշակի սկզբունքներ: Հատկանշական է, որ վարքային հոգեբանության էլեմենտների կիրառումը հատկապես նախընտրելի է, երբ խոսքը վերաբերում է արդյունաբերական կամ կենցաղային ամենօրյա շահագործման իրերի մշակմանն ու նախագծմանը: Մասնավորապես, դիզայնի հոգեբանության պարագայում, երբ փոխվում է իրի ֆունկցիոնալությունը, փոխվում է նաև մարդու գործողությունն այն շահագործելու արդյունքում: Կայուն կերպով կրկնվող նոր գործո-

ղությունը ձևավորում է նոր վարքագիծ, իսկ նոր վարքագիծը փոփոխում է մարդու հոգեկանը[6]:

Մարդը բանական էակ է, սակայն նա նաև ոչ պակաս հուզական էակ է: Հույզերը մեր հոգեկանի հիմնական և անբաժանելի մասն են կազմում: Իրականության երևույթների անմիջական ընկալումն իրականանում է, նախ և առաջ, հուզական արձագանքի շնորհիվ, ապանոր՝ռացիոնալ եղանակով: Անկախ այն բանից, թե խոսքը գնում է արվեստի գործերի ընկալման, միջանձնային հաղորդակցման կամ մարդկային գործունեության ցանկացած այլ տեսակի մասին, հույզն է հոգեկանի կենսագործունեության առաջին հավաստի չափանիշը: Այդ պատճառով հոգեբանության դասավանդման մեթոդաբանության առանցքային խնդիրներից է ուսանողի հոգեհուզական և հուզազգայական ոլորտների խթանումը, ինչը կհանգեցնի վերջինիս հուզական գրագիտության բարձրացմանը և դրանով իսկ կնպաստի հոգեհուզական անհատական փորձի ընդլայնմանն ու հարստացմանը: Հուզական գրագիտության ընդլայնումը, այլ կերպ ասած, հուզական ինտելեկտի բարձրացումը գործնականում հնարավոր է իրականացնել մեթոդաբանական մի շարք հնարքների միջոցով: Դրանք ապրումակցման մեխանիզմի վրա հիմնված մեթոդներն են, ինչպես նաև հոգեբանական ազատ զուգորդման մեթոդը և մի շարք խաղային տեխնիկաներ: Խաղն, առհասարակ, մարդու կենսագործունեության անբաժանելի մասն է կազմում և խաղի դինամիկ բնույթը շատ ներդաշնակ է հոգեկանի գործընթացների դինամիզմին:

Պետք է նշել, որ մեթոդաբանության տեսանկյունից հոգեբանության դասավանդման ընթացքում մեծ կարևորություն ունեն լսարանում կազմակերպվող ազատ քննարկումները համապատասխան խնդիրների վերաբերյալ: Դա նշանակալի գործոն է հոգեբանական փորձի փոխանակման առումով: Այս դեպքում, հատկապես

---

6 **Штайнер,** *Духовнонаучные основы педагогики*, էջ 115.

միջանձնային հաղորդակցման հոգեբանության պարագայում, սցենարային մտածողության զարգացմանն ուղղված մեթոդաբանական հնարների միջոցով հնարավոր է դառնում ուսանողի մոտ ձևավորել այս կամ այն իրավիճակի վերաբերյալ այլընտրանքային տեսակետներ: Ապրումակցման և նմանակման հոգեբանական մեխանիզմների վրա հիմնված սցենարային մեթոդաբանությունները նպաստում են հոգեբանական փորձի հարստացմանը: Այս իմաստով, չի կարելի անտեսել դասավանդման մեթոդաբանության տեսանկյունից այնպիսի կարևոր գործոն, ինչպիսին է ուսանողի և դասավանդողի փոխազդեցությունը: Հենց այդ փոխազդեցության բնույթից է կախված մտածողության ոճը, գիտական ճաշակը, մասնագիտական հետաքրքրությունների այն շրջանակը, որ կձևավորվի ուսանողի մոտ: Չէ որ մանկավարժն ուսանողին է փոխանցում մասնագիտական իր անհատական փորձը, առարկայի իր սեփական տեսլականը: Եվ այս իրողությունը հատկապես արդիական է հոգեբանության դասավանդման համատեքստում, քանի որ այս պարագայում առաջնային են դառնում ոչ միայն մանկավարժի մասնագիտական որակները, այլև իր սեփական հոգեբանական առանձնահատկությունները: Ցանկացած միջանձնային փոխազդեցություն ենթադրում է որոշակի հոգեբանական ներազդում, սակայն հոգեբանության դասավանդման պարագայում այդ ներազդման արդյունքը կախված է այն բանից, թե որքանով է դասավանդողի անհատական հոգեբանությունը համապատասխանում իրավիճակին, որքանով է այն զուրկ ներքին հակասություններից և որքանով է վերջինիս մոտ ձևավորված հոգեբանականացված մտածողության մշակույթը, որքանով է նա հետևողական հոգեբանական էթիկայի սկզբունքների պահպանման հարցում: Հոգեբանական էթիկան այս պարագայում ենթադրում է դասավանդողի բաց, անկողմնակալ և նախապաշարմունքներից զուրկ հայացքը իրականության երևույթներին: Այս իմաստով չափազանց կարևոր է այն աշխատանքը, որ դասավանդողը տանում է սեփական անձնային աճի ուղղությամբ:

Եվ լսարանի արձագանքն այս դեպքում լավագույն չափանիշն է, որ կարող է մատնանշել այն բացթողումները, որ թույլ է տվել դասավանդողը սեփական անհատականության շրջանակներում[7]:

Ուսուցանումը փոխպայմանավորված գործընթաց է, և այն կարելի է հաջողված համարել միայն այն պարագայում, երբ փոխազդեցության երկու կողմն էլ փոխվել են հոգեբանական փորձի փոխանակման այդ փուլում: Եվ դասավանդողի կարևորագույն խնդիրն է՝ ինքնակրթվել կրթելու գործընթացում:

Դիզայնը արտաքին իրականության կառուցարկման այնպիսի տեսակ է, որը, նախ և առաջ, սկսվում է ստեղծագործական մտքի կառուցարկման շրջանակներում: Այս իմաստով, դիզայնի հոգեբանության կարևոր խնդիրներից է ուսանողի և դասախոսի միջև անհատական փորձի փոխանակումը: Անդրադառնալով ուսանողի և դասավանդողի միջև փորձի փոխանակման համատեղ գործընթացին՝ պետք է նշել, որ այստեղ բացի մասնագիտական, հոգեբանական և անձնային փորձից խոսքն, առաջին հերթին, վերաբերում է դասավանդողի ստեղծագործական փորձի փոխանցմանը և ուսանողի մոտ ստեղծագործական մոտեցման նախադրյալների զարգացմանը: Ստեղծագործականությունը մտավոր կարողության հիմնական բնութագրիչներից է, իսկ ստեղծագործական մոտեցման առկայությունը՝ ձևավորված և անկախ մտքի առաջին չափանիշը: Սովորականի մեջ կարողանալ բացահայտել արտասովորը, տեսնել նախկինում անհայտը՝ կերտելով նախկինում չբացահայտված այնպիսի իրողություններ, որոնք կհանգեցնեն որակապես նոր արդյունքների՝ սա՛ է ստեղծագործական մտածողության հիմնական հատկանիշը: Եվ դասավանդողի խնդիրն է մեթոդաբանական գործիքակազմի միջոցով խթանել ուսանողի ստեղծագործական մտածողությունը, իսկ մեթոդաբանական համակարգն ինքնին պետք է հանդիսանա ստեղծագործական մոտեցման օրինակ:

---

[7] **Ֆրեյդ, Զ.** Художник и фантазирование, Москва, 1995, էջ 99.

Ինչ վերաբերում է մասնագիտական գրականության ընտրության հարցին, ապա այստեղ նախընտրելի է կիրառել համադրական մոտեցում՝ ներառելով թե՛ մասնագիտական դասագրքեր, թե՛ առանձին հեղինակների բնագրային աշխատություններ՝ նախապատվությունը տալով բնագրերին, քանի որ տեսության հեղինակի տեսակետին անմիջականորեն հաղորդակից լինելով է, որ ուսանողը կկարողանա սեփական անհատական մտածողության պրիզմայի միջով տեսնել այն գաղափարը, որ ներդրել է ինքը՝ հեղինակը՝ առավելագույնս յուրացնելով վերջինիս կենսափորձում ամփոփված կարևորագույն տարրերը: Ընդհանուր առմամբ, հատկապես, երբ խոսքը վերաբերում է հոգեբանությանը, ցանկալի է գրականության ցանկի մեջ ներառել նաև համապատասխան թեմաներին առնչվող այնպիսի գրքեր, որոնք կնպաստեն ուսանողի արժեհամակարգի ձևավորմանը: Չէ որ կայուն արժեհամակարգի ձևավորումը ոչ միայն հոգեբանության դասավանդման մեթոդաբանության, այլև ընդհանրապես մանկավարժության կարևորագույն խնդիրն է: Եվ այդ արժեհամակարգի մեջ կրթությունը չափազանց մեծ տեղ է զբաղեցնում: Իսկ կրթության իրացման լավագույն եղանակը ճիշտ ընտրված մեթոդն է:

ACTUAL PROBLEMS OF TEACHING METHODOLOGY OF "DESIGN PSYCHOLOGY"

NELLY ELCHYAN
Design department lecturer, SAFAA

ABSTRACT

Psychology, as an independent branch of science, has been closely attached to the sphere of art, in its core starting from period of its formation and development, keeping the element of creativity in its substantive structure, as the unique form of observing the reality. Being the actual part of that system, Design Psychology makes it possible to realize the theoretical and practical approaches of design-thinking, creative worldview and psychological abstraction in one field. Being a newly forming and developing branch, Design Psychology requires an exact methodological system for its theoretical and practical fields being researched. In this article, the methodological aspects of Design Psychology are represented and some methodological problems of pedagogical psychology in general, as well.

Key words: *Design Psychology, Psychology of Art, creative worldview, psychological thinking, teaching methodology, inner potential, pedagogical psychology*

АКТУАЛЬНЫЕ МЕТОДОЛОГИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ ПРЕПОДАВАНИЯ ПРЕДМЕТА «ПСИХОЛОГИЯ В ДИЗАЙНЕ»

НЕЛЛИ ЭЛЧЯН
Преподаватель кафедры дизайна ГАХА

РЕЗЮМЕ

Психология, как отдельная самостоятельная отрасль науки, уже у истоков своего зарождения была сопряжена со сферой искусства посредством содер

жания в своей структуре элемента творчества, являясь особой уникальной системой постижения реальности. Будучи актуальной частицей этой системы, дизайн-психология позволяет осуществлять теоретические и прикладные подходы проективного мышления, творческого мировосприятия, психологического абстрагирования в одной сфере. Являясь зарождающейся и развивающейся отраслью, дизайн-психология, со своими теоретическими и прикладными аспектами, требует выработки целостной методологической системы исследования и преподавания. В статье представлены актуальние методологически проблемы, как области дизайн- психологии, так и общей общей педагогической психологии в целом.

Ключевые слова: *Дизайн-психология, психология искусства, творческое мировосприятие, психологизированное мышление, методология преподавания, внутриличностный потенциал, педагогическая психология.*